Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Հակոբ Սիմիդյան, շրջակա միջավայրի նախարար:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Իրանի Իսլամական Հանրապետություն (Թեհրան), 2023 թվականի սեպտեմբերի 8-ից 10-ը:

3. **Հրավիրող կողմը.**
   Իրանի Իսլամական Հանրապետություն:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Ավազի և փոշու փոթորիկների դեմ պայքարի միջազգային համաժողովին:

5. **Քննարկված թեմաները.**
   Ավազի և փոշու փոթորիկների վերաբերյալ միջազգային կոնֆերանսը բարձր մակարդակի հարթակ է, որի նպատակն է համախմբել երկրներին և շահագրգիռ գործընկերներին՝ քննարկելու ավազի փոշու փոթորիկների առաջացրած հիմնական մարտահրավերների լուծման միջոցներն ու ուղիները, գտնել հնարավոր լավագույն լուծումներն ու մեխանիզմները:
   Միջոցառումը համախմբել էր ներկայացուցիչներ ավելի քան 50 երկրներից՝ ընդգծելով ավազի և փոշու փոթորիկներին գլոբալ մասշտաբով անդրադառնալու հրատապությունը:
   Հանդիպման ընթացքում քննարկվել են.

- Ավազի և փոշու փոթորիկների սոցիալ-տնտեսական ազդեցությունները,
- Տարածաշրջանային և միջազգային համագործակցության արագացման անհրաժեշտությունն ավազի և փոշու փոթորիկների դեմ պայքարում,
- Ասիայում և Խաղաղ օվկիանոսում ավազի և փոշու փոթորիկների դեմ գործողությունների տարածաշրջանային ծրագրի իրականացումը,
- Տարածաշրջանային տեխնիկական աշխատանքային խմբի ստեղծում և այլ հարցեր:

Քննարկվել է նաև մասնակից երկրների մոբիլիզացման անհրաժեշտությունը՝ ենթատարածաշրջանային, տարածաշրջանային, միջտարածաշրջանային և գլոբալ մակարդակներում՝ ռիսկերը նվազեցնելու և ավազի ու փոշու փոթորիկների բացասական անդրսահմանային ազդեցությունների նկատմամբ կայունությունը բարձրացնելու նպատակով:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Ավազի և փոշու փոթորիկների դեմ պայքարին ուղղված միջազգային համաժողովի բացումը կայացել է Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Էբրահիմ Ռայիսիի բացման խոսքով, որից հետո տեղի են ունեցել բարձրաստիճան հատվածները՝ երկրների նախարարների, պատվիրակությունների ղեկավարների, ՄԱԿ ներկայացուցիչների մասնակցությամբ:

Համաժողովի շրջանակներում հանդիպել եմ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի տեղակալ, Իրանի Բնապահպանության կազմակերպության նախագահ Ալի Սալաջեղեի հետ: Հանդիպման ընթացքում շնորհակալություն եմ հայտնել հյուրընկալության համար և կարևորել տարածաշրջանում երկու բարեկամ երկրների ու ժողովուրդների սերտ հարաբերությունները, ինչպես նաև բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված ջանքերի միավորումը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Արաքս գետի ավազանում բնապահպանական իրավունքների ապահովման և իրանական կողմի հետ գործակցության խնդիրներին: Կողմերը փաստել են, որ Արաքս գետի ջրի որակի հսկման ու պահպանման խնդիրները լուծելու համար պետք է առավել ակտիվ համագործակցել, իրականացնել փոխայցեր, դիտարկումներ և համատեղ միջոցառումներ:Այս ուղղությամբ երկու կողմերը համագործակցության շատ մեծ դաշտ են տեսնում, և այդ նպատակով Ալի Սալաջեղեին հրավիրել եմ Հայաստան:

Վերահաստատվել է Հայաստանի Հանրապետության պատրաստակամությունը՝ համագործակցելու Իրանի Իսլամական Հանրապետության հետ գլոբալ բնապահպանական օրակարգի առաջմղման գործում:

Կարճ հանդիպումներ են եղել նաև այլ գործընկերների հետ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հանդիպման ժամանակ ընդունվել է Թեհրանի նախարարական հռչակագիրը, որով բարձրաստիճան ներկայացուցիչները իրենց պատրաստակամությունն են հայտնում.

- ընդլայնել համագործակցությունը ավազի և փոշու փոթորիկների մեղմման, վերահսկման և պայքարի ուղղությամբ՝ անդրսահմանային, տարածաշրջանային և ենթատարածաշրջանային և միջազգային մակարդակներում,
- փոխանակել տեղեկատվությունն ու տեսակետները, գիտելիքները, լավագույն փորձը և քաղված դասերը տվյալների հավաքագրման, վերլուծության և կառավարման վերաբերյալ,
- մշակել ռազմավարություն ավազի և փոշու փոթորիկների հիմնական պատճառներին, ռիսկերին և հետևանքներին անդրադառնալու համար,

- բարձրացնել հասարակության իրազեկվածությունը՝ մարդկանց առողջության, գյուղատնտեսության, սննդի անվտանգության, ենթակառուցվածքների, կրթության, տրանսպորտի, էներգետիկայի և ընդհանուր սոցիալ-տնտեսական ոլորտների վրա ավազի և փոշու փոթորիկների հետևանքների վերաբերյալ:

Հռչակագրի համաձայն՝ Կողմերը իրենց աջակցությունն են հայտնում Արևմտյան Ասիայի տարածաշրջանային նպատակային հիմնադրամի ստեղծմանը՝ ավազի և փոշու փոթորիկների դեմ պայքարելու համար, որին աջակցություն կտրամադրվի անդամ պետությունների, միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների, խոշոր խմբերի և այլ դոնորների, մասնավոր հատվածների կամավոր ներդրումներով:

Համաձայն հռչակագրի Կողմերը ողջունում են հետևյալ առաջարկները.

- Իրանի Իսլամական Հանրապետության կողմից ներկայացված ենթատարածաշրջանային գործողությունների ծրագրի իրականացման համար տարածաշրջանային տեխնոլոգիական կենտրոն/հանձնաժողով/աշխատանքային խմբի ստեղծում,
- Ասիայում և Խաղաղ օվկիանոսում ավազի և փոշու փոթորիկների դեմ պայքարի տարածաշրջանային գործողությունների ծրագիրը (ESCAP/78/12/Add 1) որպես ռազմավարական ուղեցույց այլ տարածաշրջանների երկրների համար,
- ավազի և փոշու փոթորիկների մեղմմանը և վերահսկմանն ուղղված կոնվենցիայի ստեղծում:

9/15/2023

X

ՀԱԿՈԲ ՍԻՄԻԴՅԱՆ

Signed by: SIMIDYAN HAKOB 3004840588

Հակոբ Սիմիդյան
13.09.2023թ.

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը - ***Շրջակա միջավայրի նախարարություն***
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը –***ՀՀ վարչապետի որոշում N913-Ա***
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) ***Հակոբ Սիմիդյան – ՀՀ շրջակա միջավայրի նախարար***
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը – ***Իրանի Իսլամական Հանրապետություն /Թեհրան/***
5. Գործուղման ժամկետները – ***2023թ. սեպտեմբերի 8-10-ը***
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ -***2023թ.պետական բյուջեով շրջակա միջավայրի նախարարությանը հատկացված միջոցների հաշվին***

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

✓ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Հակոբ Սիմիդյան	2	3	...	**Ընդամենը** (դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)					
	Ավիատոմսի արժեքը (դրամ)					
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)					
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը					

	Ընդամենը (դրամ)					
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	28 USD				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	10798				10798
	Օրերի քանակը	3				
	Ընդամենը (դրամ)	32394				32394
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար					
	Մուտքի արտոնագրի վճար					
	Այլ ծախսեր (*նկարագրել*)					
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		32394				32394

08/09/2023թ. ԿԲ հաշվարկային փոխարժեք՝ 1 USD = 385.66 ՀՀ դրամ

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝ Ա. Խաչատրյան

08.09.2023թ.